2025 թվականի Պետական վերահսկողական ծառայության տարեկան աշխատանքային հաշվետվություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ներկայացնում է 2025 թվականին կատարված աշխատանքների ամփոփ արդյունքները: Տարվա ընթացքում ծառայությունը իրականացրել է **167 մշտադիտարկում** և **16 ուսումնասիրություն**: Իրականացված վերահսկողությունների արդյունքում բացահայտվել են մոտ **5.9** մլրդ դրամի չափով առերևույթ խախտումներ: Վերականգնվել է շուրջ **449** մլն դրամ, որից **128** մլն դրամ վերադարձվել է քաղաքացուն: Ծառայության գործունեության շրջանակում **44** նյութ ուղարկվել է ՀՀ Գլխավոր դատախազություն՝ հետագա քրեաիրավական ընթացքն ապահովելու համար: Այդ նյութերից **40**-ի հիմքով նախաձեռնվել են քրեական վարույթներ:

2025 թվականին ՊՎԾ մուտքագրված գրությունների ընդհանուր թիվը կազմել է **3201,** որոնցից **643**-ը հանրագիր, դիմում-բողոքներ և հարցումներ: Դիմում-բողոքներից **426**–ը ներկայացվել է քաղաքացիների կողմից, **62-ը՝** փաստաբանների, **104**-ը՝ իրավաբանական անձանց, իսկ մնացած **51**–ը ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված հարցումներ են եղել:

- 2025 թվականին Ծառայության պետաիրավական ոլորտի վերահսկողության վարչությունն իրականացրել է **16** մշտադիտարկում և **3** ուսումնասիրություն: Վարչության կողմից 2025 թվականին արձանագրած խախտումները կազմել են ավելի քան **851,403.0** հազ. դրամ, վերականգնվել է **8,619.0** հազ. դրամ: Իրականացված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքներով նախաձեռնվել են **2** քրեական վարույթ:

- Ծառայության տնտեսական ոլորտի վերահսկողության վարչությունը 2025 թվականին իրականացրել է **19** մշտադիտարկում և **7** ուսումնասիրություն : Վարչության արձանագրած խախտումները կազմել են **1,172,302.7** հազ. դրամ, որից ՀՀ պետական բյուջե վերականգնվել է **12,500.0** հազ. դրամ, **260,000.0** հազ. դրամի չափով արգելանք է կիրառվել մեղադրյալներին պատկանող գույքի նկատմամբ, ինչպես նաև արձանագրվել է 60,600.0 հազ. դրամ և 854.7 հազ. ԱՄՆ դոլարի ոչ արդյունավետ ծախս: Իրականացված ուսումնասիրությունների և մշտադիտարկումների արդյունքներով նախաձեռնվել են **7** քրեական վարույթներ:

- Ծառայության գնումների գործընթացների վերահսկողության վարչությունը 2025 թվականին իրականացրել է **43** մշտադիտարկում: Ինչպես նաև 2025 թվականի ընթացքում կազմակերպված **16510** գնման ընթացակարգերում հրավերների տեխնիկական բնութագրերի ոլորտը կանոնակարգող օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու **164** դեպք, որոնց վերաբերյալ Ծառայության կողմից պատվիրատուներին ներկայացվել են առաջարկություններ: Մշտադիտարկումների արդյունքում բացահայտվել է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող և վերջիններիս

հետ փոխկապակցված անձանց մասնակցության **53** դեպք: Նշվածով պայմանավորված՝ գնումների գործընթացներում առերևույթ կեղծ տեղեկատվության ներկայացմամբ կնքված պայմանագրերի վերաբերյալ պատվիրատուներին ներկայացվել են ծանուցումներ, միաժամանակ, հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազություն: Մշտադիտարկումներով արձանագրվել են նաև պատվիրատուների կողմից գնումների գործընթացների կազմակերպման օրենսդրական պահանջների խախտման **58** դեպք, որոնց վերաբերյալ ներկայացվել են համապատասխան առաջարկներ՝ խնդիրները կարգավորելու և պատասխանատու աշխատակիցների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ: **16** դեպքով՝ պատասխանատու աշխատակիցների նկատմամբ կիրառվել են կարգապահական պատասխանատվության տարբեր միջոցներ, այդ թվում՝ **1** դեպքով աշխատանքից ազատում, **2** դեպքով՝ գնումների համակարգող հանդիսացած անձանց հետ լուծվել են ծառայությունների ձեռքբերման պայմանագրերը: Միաժամանակ, **2** ընթացակարգի վերլուծությամբ արձանագրված ակնհայտ ցածր գնառաջարկի վերաբերյալ ՀՀ մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հիման վրա հարուցվել է վարույթ: Վերահսկողական գործառույթների իրացման արդյունքում արձանագրված խախտումները կազմել են **2,369,537.8** հազ. դրամ: Իրականացված վերահսկողության արդյունքները զեկուցվել են ՀՀ վարչապետին և իրավական գնահատականի անհրաժեշտության պարագայում ներկայացվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Արդյունքում՝ ներկայացված տեղեկատվության հիման վրա նախաձեռնվել է **17** քրեական վարույթ:

- Ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչությունը 2025 թվականին իրականացրել է **36** մշտադիտարկում և **1** ուսումնասիրություն: Վարչությունը 2025 թվականին իրականացրած վերահսկողական գործողությունների արդյունքում արձանագրել է **1,016,329.2** հազ. դրամի խախտումներ, վերականգնվել է **247,027.1** հազ. դրամը: Իրականացված մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախաձեռնվել է **9** քրեական վարույթ:

- Ծառայության սոցիալական ոլորտի վերահսկողության վարչությունը 2025 թվականին իրականացրել է **22** մշտադիտարկում և **5** ուսումնասիրություն: Վարչությունը 2025 թվականին իրականացրած մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում արձանագրել է **523,834.4** հազ. դրամի խախտումներ, վերականգնվել է **308,932.4** հազ. դրամ, որից պետական բյուջե վերականգնվել է՝ **180,672.4** հազ. դրամ, իսկ քաղաքացուն է վերադարձվել **128,260.0** հազ դրամ: Իրականացված մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա նախաձեռնվել է **2** քրեական վարույթ:

- ՀՀ պետական վերահսկողական ծառայության ստուգումների իրականացման ոլորտի վերահսկողության վարչության կողմից 2025 թվականի ընթացքում իրականացվել են **18** մշտադիտարկում: Տրամադրված տեղեկությունների հիման վրա նախաձեռնվել է **2** քրեական վարույթ:

- Ծառայության տեղեկատվական համակարգերի, տվյալների շտեմարանների կառավարման և ռիսկերի գնահատման վարչության կողմից 2025 թվականին իրականացվել է **1** մշտադիտարկում: Որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ: Տեղեկատվական համակարգերից և տվյալների շտեմարաններից դուրս բերված տեղեկատվության արդյունքում կազմվել են **41** վերլուծական տեղեկանք:

- Ծառայության իրավական ապահովման և օրինականության վերահսկողության վարչությունը 2025 թվականին իրականացրել է **12** մշտադիտարկում:

Ազգային ժողովի կողմից 2025 թվականի մայիսի 29-ին ընդունվել են ««Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները: Ի թիվ այլնի՝ օրենսդրական փոփոխություններով Պետական վերահսկողական ծառայությանը վերապահվել է նոր՝ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության իրականացման գործառույթ:

Նշված օրենսդրական փոփոխությունների հիմա վրա փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում, այդ թվում՝ **Ծառայության** կանոնադրությունում, ստեղծվել է նոր հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում՝ ֆինանսաբյուջետային հսկողության և ֆինանսական վերահսկողության վարչությունը՝ նոր լիազորության վերապահմամբ:

Ընդունվել են օրենսդրական փոփոխություններից բխող մի շարք ենթաօրենսդրական ակտեր, այն է՝ ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է «Պետական վերահսկողական ծառայության մասին» օրենքով նախատեսված պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության շրջանակներում իրականացվող ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը, իսկ Ծառայության ղեկավարի հրամանով հաստատվել է Ռիսկայնությունը որոշող չափանիշների հաշվարկման և գնահատման կարգը:

Հաստատվել է ՀՀ պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2026 թվականի ծրագիրը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ